ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 182.8. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը

1. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության պաշտոնատար անձի օրինական պահանջը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ այլ կերպ Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը խախտում կատարած անձի նկատմամբ՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:

2. Նույն արարքը, եթե կատարվել է կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ, վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով:

Հոդված 244.19. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը

1. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը քննում է սույն օրենսգրքի 182.8.-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: